

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ  
ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2024

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ համակարգչում նշման կարգի բացատրությունները:

*Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման* համար որպես հիմք են ընդունվել <<Կենսաբանություն>> առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը:

### I. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստավորումը անցկացվում է թեստի միջոցով, համակարգչային եղանակով:

Թեստի ընդհանուր միավորը 60 է, որից 30 միավորն ընտրովի պատասխանով առաջադրանքներին է բաժին ընկնում, իսկ 30 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքներին:

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Կընդգրկվեն «Կենսաբանություն» առարկայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները:

Թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

### II. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

**Կառուցվածքը:** Ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը: Ընտրովի պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

#### 1. Կարճ պատասխանով առաջադրանքներ

**Կառուցվածքը:** Տրված են հաջորդականության, համապատասխանության, բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ, բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ, խնդիրների լուծման առաջադրանքներ, որոնց ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

## ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

**ա. Համապատասխանեցման առաջադրանքներ:** Տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների միջև կապերի, կառուցվածքի և ֆունկցիայի երկու շարքեր: Տրված շարքերում պետք է գտնել միավորների՝ իրար համապատասխանող գույգերը:

**բ. Ճիշտ հաջորդականության ընտրությամբ առաջադրանքներ:** Տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների առանձին փուլեր, որոնցից անհրաժեշտ է ձևավորել տվյալ գործընթացի, երևույթի ճիշտ հաջորդականությունը:

**գ. Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ:** Տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել բոլոր ճիշտ պատասխանները:

**դ. Բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ:** Տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել բոլոր սխալ պատասխանները:

**ե. Խնդիրներ:**

### IV. ԹԵՏՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Կենսաբանություն» առարկայի ուսումնական ծրագրերի:

Ստորև ներկայացվում են առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները (տե՛ս աղյուսակ 1)

Աղյուսակ 1

**Թեստի առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները**

Հ/Հ	Կենսաբանությունն առարկայի հիմնական բաժինները
1	Կենդանի օրգանիզմների բազմազանությունը
2	Կենսաբանություն: Մարդ
3	Ընդհանուր կենսաբանություն

## ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը:

Համապատասխանեցման առաջադրանքների դեպքում անհրաժեշտ է յուրաքանչյուր լատինական տառով նշված կենսաբանական գործընթացների, երևույթների, կառուցվածքի կամ ֆունկցիայի դիմացի պատուհանիկից ընտրել տվյալ կենսաբանական գործընթացներին, երևույթներին, կառուցվածքին կամ ֆունկցիային համապատասխանող ճիշտ տարբերակը:

Ճիշտ հաջորդականության ընտրությամբ առաջադրանքների դեպքում անհրաժեշտ է պատասխանի համար նախատեսված դաշտում մուտքագրել ըստ հաջորդականության ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը:

Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքների դեպքում պատասխանի համար նախատեսված դաշտում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակները:

Բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքների դեպքում պատասխանի համար նախատեսված դաշտում պետք է նշել սխալ պատասխանին համապատասխանող շրջանակները:

Խնդիրների դեպքում պետք է ստացած պատասխանը մուտքագրել պատասխանի համար նախատեսված դաշտում առանց չափման միավորի: